



ՍՊԱՌԻՉ ուսումնասիրութիւն մը չէ տալիքս, որուն հարկաւոր կարողութիւնը կը պակսի ինձ, թէեւ ի սրտէ և անկեղծօրէն կը ցանկամ: Ինձի՝ հաւաքմանս մէջ՝ կը պակսին շատ մը Հայերէն հին տպագրութիւններ, (քանի որ նպատակս մինակ անոնց փորագրական մանրանկարներով զրազիլ է) նաեւ ինձի կը պակսին Հայ տպագրութեան պատմութեան մասին հրատարակութիւններ: Տիպ ու Տաշը՝ ողբացեալ թէոզիկի այդ կարեւոր հրատարակութիւնը՝ կը ցաւիմ որ շատ ուշ կըրցայ ձեռք ձգել՝ շնորհիւ Պրն. Ա. Զօպանեանի ազնուութեան, առանց որուն գաղափար չպիտի ունենայի այդ յոգնաժան աշխատութեան մասին, որուն մէջ թէեւ պակասեցաւ զոհացուցիչ նիւթ: Արդէն չեմ ալ կարծեր որ մեր մօտ կայ Հայ Տպագրութեան Պատկերազարդ այնպիսի աշխատութիւն մը որ Հայ հին ու նոր տպագրութեանց մէկ կատարեալ ցուցակը ըլլալէ զատ ըլլայ նաեւ տպարաններու, տպագրիչներու եւն. լիակատար ուսումնասիրեալ պատմութիւնը:

Անշուշտ հետաքրքիր ընթերցողը ասոնք նկատի պիտի առնէ երբ աշխատութեանս արժէքին գնահատութիւնը, կամ քննադատութիւնը խնդիր ըլլայ:

Անտարակոյս նիւթը անկոխ գետին մըն է մեր զեղարուեստական ուսումնասիրութեանց ընդարձակ ասպարէզին մէջ, որուն ընդգրկած սահմանները բոլորովին անծանօթ կը մնան մեզի: Գոթախտարար պարագաները չեն ներեր որ կարենամ ընել սկզբնաւորութեան պատմութիւնը Հայ Փայտափորագրական Պատկերազարդութեան: Հոս տալիքս ազնարկ մըն է ինչ ինչ տեղե-

կութիւններով որոշ կարգ մը փորագրիչ Հայերու և իրենց արտադրութեանց և նաեւ անոնց ազդեցութեան աղբիւրներուն մասին: Ուսումնասիրութիւնս աւելի հեշտին ընելու համար կու տամ կարեւոր արտատպութիւններ՝ որոնց հրատարակութեան համար ամէնքս ալ երախտապարտ շնորհակալութեամբ մը պէտք է արտայայտուինք «Բագմավէպ»ի յարգելի խմբագրութեան՝ որ ազնիւ և զոհարեք ջանքերով զիւրացուց այս արտատպութեանց հրատարակութիւնը:

1512ին կատարուեցաւ առաջին տպագրութիւնը Մեղապարտ Յակոբ անուն Հայու մը կողմէ Վենետիկի մէջ: Աւելի բան մը դժբախտարար չենք գիտեր այս հին հրատարակիչին մասին: Ան ինքզինքը կու չաժ է մեղապարտ՝ պարզապէս Հայոցս մէջ ընդունուած և հին ձեռագրաց յիշատակարաններուն մէջ հասարակ եղող նուազական, մեղադրական տիտղոսներ գործածելու սովորութեան համար: Հայկական այս առաջին և հնագոյն տպագրութիւնը ունի իր տպարանանիշ չորս լատին տառեր D. I. Z. A.: Մեղապարտ Յակոբ եղած է Հայերէն առաջին հրատարակիչը, սակայն տպարանը ուր այդ հրատարակութիւնը կատարուեցաւ Վենետիկեան էր և առաջին Հայկական տպարանին տէրն էր Democrito Terrazina որ նոյն իսկ 1498ին ձեռնարկած է Հայերէն գրով հրատարակութեան<sup>1</sup>:

1512-3ի հրատարակութիւնը՝ չափա-

1. Այս մասին տես Բագմավէպ 1913 թիւ 11-12. «Հայ. Ա. տպարանի հիմնադիրը» Հ. Կ. Տէր-Սահակեանի արժեքաւոր յօդուածը: